



ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
 ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
 Հեռ. 56 03 60, 091435136, Էլ. Խաղե foi@foi.am, www.foi.am
 FREEDOM OF INFORMATION CENTER NGO
 1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.05.2016թ.
 284-ի 7

ՀՀ Սյունիքի մարզպետ
 պարոն Սուրիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ (ուժի մեջ է մտել ս/թ հունվարի 1-ից) տեղեկատվության ազատության ոլորտում նոր պարտավորություններ են սահմանվել տեղեկատվություն տնօրինողների համար:



Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել

1. Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացված են արդյոք տեղեկություն ստանալու հարցումները, դրանք գրանցվում են արդյոք քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:
2. Խնդրում ենք տրամադրել Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության գործող կարգը՝ տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
 Լիանա Դոդոյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mtaes.am

23.05 2016թ. № 03/15/2249-16
Ձեռք 17.05.16 № 284-17

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ի
նախագահ Լ. Դոյրոյանին

Հարգելի՛ տիկին Դոյրոյան

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնվում է հետևյալը.

1.<< Սյունիքի մարզպետարանի էլեկտրոնային փաստաշրջանառության համակարգում առանձնացված են տեղեկություն ստանալու հարցումները: Դրանք օրենքով սահմանված կարգով և գործառնության կարգին համապատասխան մուտքագրվում են, գրանցվում քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:

2.<< Սյունիքի մարզպետարանը ներկայումս առաջնորդվում է << կառավարության <<Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին>> որոշմամբ: Տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման վիճակագրության վարման վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով տեղադրվում է << Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում:

<< Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի <<Դիմեք մեզ>> բաժնի <<Տեղեկատվություն ստանալու իրավունքն ու կարգը>> ենթաբաժնում տեղադրված են վերոնշյալ կարգի վերաբերյալ պարզաբանումներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Ծատրյան
Հեռ.՝ (+374 285) 23573
Էլ-հասցե՝ syunik.press@mtaes.am,
syunik.press@mta.gov.am